# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 103-Լ

«24» 12 2024 թ. ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի տեխնիկական անձնակազմի վարորդի, Կոտայքի մարզի տարածքային բաժնի տեխնիկական անձնակազմի վարորդ-ցրիչի, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության տարածքային վարչության տեխնիկական անձնակազմի վարորդի և Սյունիքի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի տեխնիկական անձնակազմի վարորդ-ցրիչի մեկական թափուր հաստիքները Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի 4 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը

սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 9-րդ գլխի 32-րդ կետի «Վարչության դատախազ 4» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 8» բառերով, «Ընդամենը 13» բառերը՝ «Ընդամենը 17» բառերով, 15-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 128» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 132» բառերով, իսկ 6-րդ բաժնի «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 128» բառերը՝ «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 132» բառերով,

2) 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 3.3-րդ գլխի 15-րդ կետի «Վարորդ 17» բառերը փոխարինել «Վարորդ 16», «ԸՆԴԱՄԵՆԸ 28» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ 27» բառերով, «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Ֆինանսատնտեսական վարչությունում 41» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Ֆինանսատնտեսական վարչությունում 40» բառերով, իսկ 25-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 134» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 133» բառերով,

3) 3-րդ բաժնի 34-րդ գլխի 117-րդ կետի «Վարորդ-ցրիչ 1» բառերը փոխարինել «Վարորդ-ցրիչ 0» բառերով, «ԸՆԴԱՄԵՆԸ 3» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ 2» բառերով, «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզի դատախազությունում 9» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզի դատախազությունում 8» բառերով, իսկ 43-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 63» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 62» բառերով,

4) 4-րդ բաժնի 44-րդ գլխի 167-րդ կետի «Վարորդ 5» բառերը փոխարինել «Վարորդ 4», «ԸՆԴԱՄԵՆԸ 8» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ 7» բառերով իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Զինվորական կենտրոնական դատախազությունում 17» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Զինվորական կենտրոնական դատախազությունում 16» բառերով,

5) 4-րդ բաժնի 46-րդ գլխի 176-րդ կետի «Վարորդ-ցրիչ 1» բառերը փոխարինել «Վարորդ-ցրիչ 0», «ԸՆԴԱՄԵՆԸ 2» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ 1» բառերով, «ԸՆԴԱՄԵՆԸ՝

Կայազորի զինվորական դատախազությունում 4» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 3» բառերով, իսկ 52-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 51» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 49» բառերով,

6) 5-րդ բաժնի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 134» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 133» բառերով, «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 63» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 62» բառերով, «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 51» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 49» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ** **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**